Ի. ԽՈՒԼԻՆ

Թե ինչպես զարաչչի խոջուկը

ՀՐԱՏԱՐԱԿ ՄԻԱՅՆ

ՉԱՅՐՎԵԺ

«ԽՈՐԱՆ» 2000

Ի. ԽՈԼԻՆ
ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ Ռ. ԹԱՐՈՒՄԵԱՆԻ

ԹԵ ԻՆՉՊԵՍ

ՉԱՐԱՃՃԻ

ԽՈԶՈՒԿԸ ՀՐԱՇՔՈՎ ՄԻԱՅՆ ՉԱՅՐՎԵՑ

«ԽՈՐԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆ 2000

СОРТ
ФУЛЛАРД Т. ВЯ

Ամեր խոզուկի
Ծննդին
Խաղալիքներ
Բերեցին:

Մսաղաց,
Գրտնակ,
Սեղան,
Ինքնաեռ
Ու վառարան:



Խոզուկն ասաց
Խանդավառ.
«Ես ճաշ կեփեմ
Ինձ համար:

Մեկ-երկու,
Երեք-չորս-հինգ,
Վազեմ գտնեմ
Վառելիք»:

«Զգույշ եղիր,–
Ասաց ոզնին.
– Տունդ կտաս
Կրակին:

Վատ ես տեսնում
Երեւի թե.
Վառարանն այդ
Խաղալիք է»:

Խոզուկին էլ
Քիչ է դարդը:
Նա ճարեց
Լուցկին ու փայտը,

Վառարանը
Կպցրեց
Ու կողքին
Հանգիստ նստեց:

Ճախրեցին վերեւ
Կայծերը,
Ծուխն ելավ,
Ծածկեց պատերը:

Դռնակից ցատկեց
Կրակը,
Եւ իսկույն այրեց
Հատակը,

Ոլորվեց նա,
Պտտվեց՝
Խոզուկին անկարգ՝
Կծեց:

Բղավեց խոզուկն.
«Օգնե՛ք,
Կրակից
Ինձ ազատեք»:

Մորեկին խլուրդն
Ասում է.
«Մեկն ինչ-որ մի բան
Այրում է:

Ծառից ինչ է
Երեւում»:
«Տունն է խոզուկի
Այրվում:

Թռնենք արագ,
Շտապենք,
Հրշեջներին մենք
Բերենք»:

Հրշեջները հասան
Ձրով,
Դույլով, բահով,
Կարթաձողով

Ու փրկեցին
Խոզուկին.
Վերջ տվեցին
Կրակին:



Եկավ
Բժիշկ մոծակը,
Բերեց
Դեղն ու բամբակը,

Վիրակապեց
Խոզուկին,
Պառկեցրեց
Իր սայլակին:

Հիվանդանոց
Ուղարկեց,
Որ նա բուժվի
Մինչեւ վերջ:



Բադիկներն էլ
Ասացին.
«Լավ դաս եղավ
Անկարգին»:

ԻՍԿ ՁԵԶ ՊԱՐԶ Է ԱՅՍՊԻՍՈՎ.

ՊԷՏՔ ՉԷ ԽԱՂԱԼ

ԿՐԱԿՈՎ

Թե ինչպես չարաճճի խոզուկը
հրաշքով միայն չայրվեց

Հեքիաթ